ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

գ. Կարենիս «18» հուլիս 2012թ.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս գյուղական համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Բաղդասարյանի, մի կողմից, և «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (հետագա տեքստում՝ Ասոցիացիա) ի դեմս Ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանի, մյուս կողմից (հետագա տեքստում՝ Կողմեր).

Կարևորելով տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և ինքնակառավարման արդյունավետության բարձրացման մեթոդական ու մեթոդաբանական օժանդակության հրատապությունը,

Անհրաժեշտ համարելով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետության անունից հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավումը,

Ձգտելով հնարավորին չափ նպաստել քաղաքացիների շահերի և իրավունքների ոտնահարման կանխարգելմանն ու որոշումների կայացմանը նրանց անմիջական մասնակցության ապահովմանը,

Առաջնորդվելով օրենքի գերակայության և բարոյական վարքագծի հավասարակշռությամբ, առաջնայնություն տալով համայնքային ծառայողի բարոյական վարքականոնի մշակմանը և ներդրմանը,

Գնահատելով Ասոցիացիայի դերը որպես կոռուպցիայի հաղթահարման ոլորտում իր ներկայացուցչական ստորաբաժանումների շրջանակներում Տեղական ինքնակառավարման մարմին (հետագա տեքստում՝ ՏԻՄ)-քաղաքացի հարաբերություններում տեղեկատվության փոխանակման լրացուցիչ միջոց,

Ընդգծելով տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունները կարգավորող արդեն ընդունված և ընդունվելիք նորմատիվ ակտերի վերաբերյալ կայացվող որոշումները հրապարակային և թափանցիկ դարձնելու, տեղում լուսաբանելու, ճիշտ ըմբռնելու ու կյանքի կոչելու գերակայությունը,

Կողմերը կնքեցին սույն Համագործակցության Համաձայնագիրը (հետագա տեքստում՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի նպատակները

1.1.Կողմերը միավորում են ջանքերը հետևյալ նպատակներով՝

- նպաստել Կարենիս գյուղական համայնքում կոռուպցիայի կանխարգելմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը,
- աջակցել Կարենիս գյուղական համայնքում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը,
- բարձրացնել Կարենիս գյուղական համայնքի բնակչության կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության վերաբերյալ իրազեկության մակարդակը,
- նպաստել կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիների շահերի և իրավունքների պաշտպանությանը,
- նպաստել կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության ընթացակարգային և համակարգային փոփոխությունների կատարմանը:

2. Համագործակցության հիմնական սկզբունքները

2.1.Սույն Համաձայնագիրը սահմանում է Կողմերի միջև համագործակցության հետևյալ սկզբունքները.

- Կողմերի միջև համագործակցությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն Համաձայնագրի դրույթների վրա,
- Համագործակցության ընթացքում Կողմերն առաջնորդվում են համաղեկավարման, համապատասխան պատասխանատվության, թափանցիկության և ժողովրդավարության սկզբունքներով:

3. Համագործակցության ուղղությունները

3.1. Կողմերը համաձայնվում են Կարենիս գյուղական համայնքում իրականացնել հետևյալ գործունեությունը.

3.1.1. Ասոցիացիան պարտավորվում է՝

- Քաղաքացիներին հնարավորություն ընձեռել արձանագրելու իրենց հանդիպած կոռուպցիոն դեպքերը և բողոքներ ներկայացնելու գյուղական համայնք,
- Տրամադրել անվճար իրավաբանական աջակցություն՝ գյուղական համայնքին ուղղված դիմումների ընթացքին օժանդակելու նպատակով,
- Բացահայտել կոռուպցիային վերաբերող օրենքների և այդ օրենքների ու որոշումների իրականացման թերությունները, ինչպես նաև գյուղական համայնքում առկա կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործունեության տեսակները՝ անմիջապես տուժող անձի կողմից ներկայացված արձանագրության հիման վրա,
- Մինչ բացահայտված կոռուպցիոն դեպքերի հանրայնացման և օրենսդրորեն նախատեսված այլ ընթացակարգերի ապահովումը, գործընկերության հիմքի վրա գյուղական համայնքի հետ համատեղ քննարկում ծավալել կոռուպցիոն տարրեր ընդգրկող դեպքերի կապակցությամբ, համատեղ եզրահանգումների ակնկալիքով,
- Ապահովել քաղաքացիների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությունը՝ գյուղական համայնքի կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման նկատմամբ մասնակցային մոնիթորինգի իրականացմանը:

3.1.2. Գյուղական համայնքը պարտավորվում է՝

- Աջակցել Ասոցիացիայի կողմից քաղաքացիներին տրամադրվող այն տեղեկատվության ամբողջացմանը, որն անմիջականորեն կապված է քաղաքացիների բողոքներին առնչվող օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, կանոնակարգերով կամ ներքին փաստաթղթերով պայմանավորված ընթացակարգերի հետ,
- Հիմնվելով ասոցիացիայի կողմից Կոտայքի մարզում գործարկվող Շահերի պաշտպանության և աջակցության Կենտրոնի (հետագա տեքստում՝ ՇՊԱԿ) կողմից հավաքագրված և վերլուծված տեղեկատվության վրա՝ օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում, նախաձեռնել կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության ընթացակարգային և համակարգային փոփոխություններ,
- Նախաձեռնել, Կողմերի մասնակցությամբ, գյուղական համայնքում՝ համայնքային ծառայողների էթիկայի կանոնների կիրարկման համար անհրաժեշտ ինստիտուտների ներդրմանը, այդ ինստիտուտներում

ապահովելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածությունը,

- Աջակցել ՇՊԱԿ-ի առաջարկություններին, մասնավորապես՝ գյուղական համայնքի կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման նկատմամբ մասնակցային մոնիտորինգի իրականացնելու նախաձեռնություններին:

3.1.3.Այլ դրույթներ

- Պարբերաբար աշխատանքային քննարկումներ կազմակերպել կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ քաղաքացիների դիմում բողոքներին ընթացք տալու և դրանք բավարարելու օրենքով նախատեսված ընթացակարգերը ճշգրտելու օրակարգերով,
- Կողմերից որևէ մեկի առաջարկության դեպքում Կարենիս գյուղական համայնքի ղեկավարի մոտ անց է կացվում խորհրդակցություն՝ ճշտելու համար ՇՊԱԿ-ի և ՏԻՄ-երի համատեղ գործունեության հարաբերությունները:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն Համաձայնագրով սահմանված համագործակցությունը համակարգվում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված անձանց միջոցով:
4.2. Սույն Համաձայնագիրը կազմված է երեք էջի վրա, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից:
4.3.Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ Կոտայքի մարզի Կարենիս գյուղական համայնքի ղեկավար՝	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ՝
Արմեն Բաղդասարյան	Կարեն Զադոյան
Կ.Տ	Կ.Տ